ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**« 29 » հուլիսի 2015 թվականի №17**

## ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ , 97-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 16.10.2003 թվականի № 1334-Ն որոշումը՝ ավագանին որոշում է.

1.Խաչփար համայնքում քարտեզագրման սխալի հետևանքով առաջացած քաղաքացիների սեփականություն հանդիսացող 03-050-0010-0002 ծածկագրով 0.19 հա բնակելի կառուցապատման հողամասը /համաձայն հատակագծի/ ճանաչել համայնքային սեփականություն և կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

2. 03-050-0010-0002 ծածկագրով 0.19 հա բնակելի կառուցապատման հողամասից սահմանված կարգով առանձնացնել 0.1 հա անշարժ գույքի միավոր:

3. Չեղյալ ճանաչել համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 15-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների ու բնակավայրի հողամասերից անշարժ գույքի միավորներ առանձնացնելու մասին» № 13 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**« 29 » հուլիսի 2015 թվականի №18-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի «2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 21-ի «2015 թվականի համար գյուղապետարանի աշխատակազմի և «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ – ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հավելված 1-ում մշակույթի տան տնօրենի և հավաքարարի պաշտոնային դրույքաչափի այունակի «66.138» թիվը փոխարինել «72.751» թվով, գրադարանավարի պաշտոնային դրույքաչափի այունակի «70.822» թիվը փոխարինել «77.904» թվով:

2) Հավելված 2-ում հաշվապահի, խոհարարի և դայակի պաշտոնային դրույքաչափի այունակի «70.822» թիվը փոխարինել «77.904» թվով, պահակի պաշտոնային դրույքաչափի այունակի «66.138» թիվը փոխարինել «72.751» թվով:

3) Սույն որոշման մեջ նվազագույն ամսական աշխատավարձով վարձատրվող աշխատակիցների հաստատված դրույքաչափը տարածվում է 2015 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 1

Խաչփարիամայնքի ավագանու

2014 թվականի նոյեմբերի 21-ի N 35-Ն որոշման

**ԽԱՉՓԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների քանակը՝ 10

2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (հազար դրամ) |
|---|---|---|
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 160.0 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2/ | 1 | 160.0 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3/ | 1 | 150.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/ | 1 | 136.0 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2/ | 1 | 114.0 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3/ | 1 | 112.0 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ | | |
| Մշակույթիտանտնօրեն | 1 | 72.751 |
| Գրադարանավար | 1 | 77.904 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Հավաքարար | 1 | 72.751 |
| Պահակ | 1 | 90.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 2

Խաչփար համայնքի ավագանու

2014 թվականի նոյեմբերի 21-ի№ 35-Ն որոշման

ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 7

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (հազար դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 130.0 |
| Դաստիարակ | 1 | 119.5 |
| Դաստիարակի օգնական | 1 | 90.0 |
| Հաշվապահ | 0.5 | 77.904 |
| Խոհարար | 1 | 77.904 |
| Դայակ | 1 | 77.904 |
| Պահակ | 1 | 72.751 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«29» հուլիսի 2015 թվականի №19-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» № 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 10-ի № 234-Ն որոշման № 3 հավելվածի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Խաչփար համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին» № 37-Ն որոշման մեջ համայնքի ղեկավարի կողմից առաջարկված փոփոխությունները և լրացումները:

1. Որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի « 39 387.3 » թիվը փոխարինել «39 623.2 » թվով:

2. 2-րդ կետով հաստատված հավելվածի հատված 1-ի աղյուսակը `

1) լրացնել 7-րդ կետով՝ «Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին 235.9 » ,

2) «Ընդամենը » տողի «39 387.3» թիվը փոխարինել «39 623.2 » թվով:

3. 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ի `

1) 1-ին կետի «օրենսդիր և գործադիր մարմիներ, պետական կառավարում» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.1.1 ծրագրի «20 456.3 » թիվը փոխարինել «20 525.0 » թվով,

2) 10-րդ կետի «նախադպրոցական կրթություն» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09.1.1 ծրագրի «9 000.0» թիվը փոխարինել «9 167.2» թվով,

3) «Ընդամենը » տողի « 39 387.3 » թիվըփոխարինել « 39 623.2 » թվով:

4. 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի `

1) «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի «17 904.7 » թիվը փոխարինել « 17 973.4 » թվով,

2) «սուբվենցիա պետական (համայնքային) կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4511 հոդվածի «9 000.0» թիվը փոխարինել «9 167.2» թվով,

3) «Ընդամենը » տողի « 39 387.3» թիվը փոխարինել «39 623.2 » թվով:

5. 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի `

1) «օրենսդիր և գործադիր մարմիներ, պետական կառավարում» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.1.1 ծրագրի «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի «16 261.2» թիվը փոխարինել «16 329.9 » թվով, «Ընդամենը» տողի «20 456.3 » թիվը փոխարինել«20 525.0 » թվով,

2) «նախադպրոցական կրթություն» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09.1.1 ծրագրի «սուբվենցիա ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4511 հոդվածի «9 000.0» թիվը փոխարինել «9 167.2» թվով: «Ընդամենը » տողի « 9 000.0» թիվը փոխարինել «9 167.2» թվով:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ